այժմ ոչ գամք։ դարձեալ հրաւիրեաց զնոսա Դատաւորն, թէ չեղեւ ինչ խայտառակութիւն և չլինի։ ապէն դադարին պատմական բանք Դիոնէսիոս վարդապետի։ Այլ Դատաւորն 'ի ժողովի անդ արար քննութիւն մանրամասն ամենայն իրաւանցն Հայոց թէ վասն սեան Ս։ Յարութեան, և թէ վասն բաժանորդութեան Բեթղեհէմի, վասն արդիլելոյ զաւելն Հայոց յԱյրէ անտի ըստ տրամադրութեան Կայսերական հրովարտակաց և գործադրութեանց նոցին 'ի ձեռն պաշտօնէից և ըստ վկայելոյ բաղմութեան այլազգեաց, և գրեալ ծանոյց 'ի Դուռն զի հրովարտակաւ բարձցի ընդդիմութիւն և ատելութիւն Լատինաց, ՌՒԺԹ 'ի ՅԱ։ Զիլհիճէ, (1814)։ Գտին Լատինք զայլ ինն առիթ ատելութեան, զի փակեալ աղխեցին զհիւսիսային պղնձի դուռն Այրին Ծննդեան, որ յատկացեալէր Հայոց, զի մի իջցեն յԱյրն կատարել զպաշտամունս իւրեանց։ Եւ զկնի պատուիրելոյ Դատաւորին եւ բանալոյ զդուռն, գրեաց առ Տէրութիւնն և վասն այսր, որպէս ծանուցեալ էին Հայք, զի հրամանաւ Արքայի Մնասցէ բաց դուռն մշտընջենաւոր 'ի դիւրութիւն Հայոց, (ՅԴ։ Զիլհիճէի)։

Կոստորած ժանտախտի 'ի կողմանս Զմիւռնիոյ և Ադրիանուպոլսոյ ('ի 18 Մայիսի)։ Կայսերք Ռուսիոյ և Գերմանիոյ և զօրապետն Անգլիոյ եւ այլք կալան զնաբոլիոն Պոնապարդ և աքսորեցին զնա 'ի կղզին Ս։ Հեղինէ, անջատեալ 'ի նմանէ զկին և զորդին իւր, և եդին յաթոռ Թագաւորութեան Գաղղիոյ զԼուի 18դ, եւ 'ի Կոստանդինուպոլիս 'ի Պէյ օղլու բարձին զզինադրուշմ նորին 'ի պալատէ Դեսպանին Գաղղիոյ, և 'ի տեղի նորա եդին զնշան նոր Թագաւորին մեծ հանդիսիւ եւ ուրախութեամբ, (1814։ յ7 Մայիսի)։